Հիմնավորում

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսդրության համաձայն Սիսիան համայնքի տարեկան աշխատանքային պլանը՝

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը համայնքի ծրագրային այն փաստաթուղթն է, որը սահմանում է տվյալ տարվա ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց մասնակցությամբ համայնքում իրականացվող բոլոր ծրագրերը և միջոցառումները:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա՝ տվյալ տարվա ընթացքում համայնքի տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական և այլ ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներն առավել նպատակային և արդյունքահենք կազմակերպելու համար:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկվում են համայնքում իրականացվող համայնքի բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող, ինչպես նաև ֆինանսավորում չպահանջող բոլոր ծրագրերը, այդ թվում՝ համայնքի ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և զարգացման, համայնքային ծառայությունների մատուցման, հիմնական միջոցների կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներդրումային, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի աջակցությամբ և այլ ծրագրեր:

Համայնքի ավագանու՝ Սիսիան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծով առաջարկվում են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք բխում են Սիսիան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի՝ ավագանու կողմից հաստատված որոշումից:

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,
գովազդի և սպասարկման բաժնի պետ՝ Ե. Եղիազարյան
05.03.2024թ.

Տեղեկանք

Սիսիան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո այն հիմք կհանդիսանա համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասի պլանավորումը ճշգրտելու համար:

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,
գովազդի և սպասարկման բաժնի պետ՝ Ե. Եղիազարյան
05.03.2024թ.